ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2023թ. 1-ին կիսամյակ)

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը համակարգում և աջակցում է մարզային ենթակայությամբ գործող 45 հանրակրթական ուսումնական հաստատությունների և 3 մարզային մշակութային հիմնարկների գործունեությունը: Աջակցում է նախարարության ենթակայությամբ գործող 3 պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների և համայնքային ենթակայությամբ գործող մշակութային և մարզական հաստատությունների՝ օրենսդրության պահանջներին համապատասխան գործունեություն ծավալելու գործընթացին:

2022-2023 ուսումնական տարում մարզում գործել են 3 ավագ, 31 միջնակարգ և 14 հիմնական դպրոցներ: Մարզային ենթակայության 45 հանրակրթական դպրոցներում կրթություն է ստացել 5920 աշակերտ:

Մարզի բոլոր դպրոցները 2021-2022 ուսումնական տարվանից անցել են համընդհանուր ներառական կրթության:

Մարզում գործում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն: ՏՄԱԿ-ի և ՀՄԿ-ի կողմից վերապատրաստվել են 257 մանկավարժներ և 49 ուսուցչի օգնականներ՝ <<Համընդհանուր ներառումը ՀՀ-ում երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը դպրոցական մակարդակում>> թեմայով:

Ուսումնական տարվա ընթացքում այցելություններ են կատարվել մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգման, դպրոցավարությանն անհրաժեշտ փաստաթղթերին և գործառույթներին ծանոթացման, դասալսումների իրականացման, անհրաժեշտ մեթոդական և խորհրդատվական աջակցության տրամադրման նպատակով:

Ակնհայտ է, որ կրթական գործընթացի որակն էականորեն կախված է ուսուցչական անձնակազմի դասավանդման մեթոդիկայից և գիտելիքների մակարդակից: Այսօր մարզի համար արդիական խնդիր է ուսուցիչների գիտելիքների և հմտությունների համապատասխանեցումը ժամանակակից պայմաններին: Այս առումով կարևորվել է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը և ատեստավորումը: Այդ նպատակով իրականացվել են տնօրենների, տնօրենի տեղակալների և ուսուցիչների վերապատրաստմանն ուղղված աշխատանքներ:

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից և ՀՀ կառավարության մասնակցությամբ ՀՀ Վայոց ձորի մարզի դպրոցներում իրականացվում է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը: Ծրագրի արդյունավետ իրականացման համար մասնագիտական վերապատրաստում են անցել թվով 50 խոհարար:Կազմակերպվել են տեսական և գործնական դասընթացներ:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության համար իրականացվել են տարաբնույթ

միջոցառումներ, ռազմամարզական խաղեր, որոնք նպատակաուղղվել են սովորողների մոտ հայրենասիրության արմատավորմանն ու խորացմանը:

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում կարևոր նշանակություն են ունեցել դպրոցականների առարկայական օլիմպիադաները: Արվել է առավելագույնը օլիմպիադայի մասսայականությունը, օբյեկտիվությունը և որակը բարձրացնելու ուղղությամբ:

Դպրոցական փուլին կամավոր մասնակցելու իրավունք ունեցող աշակերտների թիվը 9-12-րդ դասարանների բոլոր առարկաներից եղել է 1327, իսկ 5-8-րդ դասարանների աշակերտների թիվը <<Մաթեմատիկա>> առարկայից՝ 2216:

2023թ. , ԿԳՄՍ նախարարության սահմանած ժամանակացույցի համաձայն, անցկացվել է օլիմպիադայի մարզային փուլը, որին մասնակցել է 434 աշակերտ: Մարզային ստուգող հանձնաժողովների կողմից հանրապետական փուլին մասնակցելու համար երաշխավորվել է 42 աշակերտ: Հանրապետական փուլի արդյունքներով 2022-2023 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում <<Ռուսաց լեզու>> առարկայի 2-րդ կարգի դիպլոմի արժանացել է 1 աշակերտ, <<Կենսաբանություն>> առարկայի 3-րդ կարգի դիպլոմի արժանացել է 1 աշակերտ, <<Ռուսաց լեզու>> և <<Ֆրանսերեն>> առարկաներից գովասանագրերի արժանացել են 2 աշակերտ, 31 աշակերտ ստացել է օլիմպիադայի եզրափակիչ հանրապետական փուլի մասնակցության վկայական:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հաջողության գրավականը անշուշտ ուսուցման և դաստիարակության ճիշտ զուգակցումն է:

Մանագիտական կողմնորոշման նպատակով «Քո արվեստը դպրոցում» ծրագրի շրջանակներում 2023թ. մայիսին մարզի դպրոցների աշակերտների մասնակցությամբ հանդիպումներ են անցկացվել անվանի մշակութային գործիչների, արվեստագետների հետ:

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում Վայոց ձորի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացվել են շարադրությունների մրցույթներ, կազմակերպվել են սպորտային, գեղագիտական, մշակութային, ստեղծագործական միջոցառումներ:

Դպրոցներում հաճախակի կազմակերպված գեղեցիկ և բազմաբովանդակ միջոցառումները, հետաքրքիր բաց դասերը, նկարչական ցուցահանդեսները, երաժշտական փառատոները, ազգային տոներին, հոբելյանական տարելիցներին նվիրված հանդիսությունները մեծապես նպաստել են դպրոցականների համակողմանի դաստիարակությանը:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը համակարգում է մարզային ենթակայությամբ 3 մարզային մշակութային հիմնարկների գործունեությունը՝ Եղեգնաձորի երաժշտական դպրոց, Եղեգնաձորի երկրագիտական թանգարան, Եղեգնաձորի մշակույթի կենտրոն:

2022-2023 ուստարին **Եղեգնաձորի երաժշտական դպրոցի** համար եղավ ձեռքբերումներով լի տարի: Դպրոցն ակտիվորեն մասնակցել է <<Արտ–Մյուզիք>> , <<Փոքրիկ քայլ>> միջազգային և <<Գլոբալ արտ ֆեստ>>, <<Արվեստ>> <<Բաբաջանյան>>, հանրապետական մրցույթ-փառատոներին, ինչպես նաև մի շարք եվրոպական օնլայն մրցույթների՝ արժանանալով բարձր պարգևների և մրցանակային տեղերի:

Տարվա ընթացքում կազմակերպվել են նաև համերգներ՝ նվիրված Բանակի օրվան, Մայրության տոնին, Մեծ եղեռնին, Ծաղկազարդի տոնին, ինչպես նաև միացյալ համերգներ <<Քույր դպրոցներ>> ծրագրի շրջանակներում՝ Երևանի Կանաչյանի անվան երաժշտական դպրոցի հետ, Վայք քաղաքի Խաչատուր Ներսիսյանի և Աղավնաձորի Մուրադ Սարգսյանի անվան արվեստի դպրոցների հետ:

Իրականացվել են նաև մեթոդական դասընթացներ տարբեր բաժիններում: Ելույթներ են ունեցել համայնքապետարանի և մարզային գրադարանի կողմից կազմակերպված տարբեր միջոցառումներին:

Եղեգնաձորի մշակույթի կենտրոնում կազմակերպվել են համերգներ, ցուցադրվել են ֆիլմեր, կրկեսային ուրախ ծրագրեր՝ աճպարարների, ծաղրածուների, վարժեցրած կենդանիների, ակրոբատների և Քեռի Մուլտիկինիկի մասնակցությամբ:

Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում կազմակերպվել են միջոցառումներ և ցուցադրություններ, իրականացվել է հայկական ավանդական թոնրի պատրաստման վարպետաց դաս, որի երկրորդ մասը՝ տեղադրումը և թրծումը, իրականացվել է 2023թ. գարնանը:

Կազմակերպվել են մի շարք միջոցառումներ հետևյալ թեմաներով՝ <<Ծաղկազարդ>>, <<Երեխաները ստեղծագործում են թանգարանում>>, <<Վայոց ձորի թանգարանները>> զրույց – քննարկում, <<Մի երեկո խարույկի շուրջ>>, <<Վայք քաղաքը. Խորհրդային շրջանի վերաիմաստավորումը>>, <<Մոմիկ ճարտարապետի ձեռակերտ խաչքարը>>, <<Խաչքարը՝ որպես կայուն ժառանգություն>>, ինչպես նաև հայ մշակույթի յուրօրինակ ու հայտնի դրսևորումներից մեկի՝ խաչքարի պատմամշակութային ամբողջական կերպարի, նրա ծագման, ժամանակագրության, հորինվածքի իմաստաբանության և խորհրդաբանության մասին զրույց-քննարկում, որտեղ ներկայացվել է Մոմիկի խաչքարը:

ՍՊՈՐՏ

Մարզային մշակութային և սպորտային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումներ անցկացնելու համար համապատասխան կազմակերպությունների հետ մշակվել է միջոցառումների պլան և վերահսկվել միջոցառումների նախապատրաստական և իրականացման աշխատանքները՝ ըստ ժամանակացույցի:

Առողջապահության նախարարության կողմից Եղեգնաձոր քաղաքում՝ Եղեգնաձորի ամֆիթատրոնում՝ Մոմիկի անվան զբոսայգու տարածքում, մայիսի 4-ին կազմակերպվեց «Առողջ ապրելակերպի արշավ», որին մասնակցեցին շուրջ 400 դպրոցականներ: Միջոցառման նպատակն էր իրազեկել բնակչությանը առողջ ապրելակերպի մասին, խրախուսել առողջ սննդի պատրաստումը, ֆիզիկական ակտիվությունը, առողջ վարքագծի ձևավորումը:

2023թ. ապրիլի 27-ը ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշմամբ հայտարարելվել էր <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի օր>>՝ մարզի բնակչության առողջության ամրապնդման, ֆիզիկական զարգացման ապահովման, ֆիզիկական պատրաստականության մակարդակի բարձրացման, ինչպես նաև ֆիզիկապես կոփված ու բարոյապես կայուն սերնդի ձևավորմանը խթանելու նպատակով:

Ըստ ժամանակացույցի՝ Վայոց ձորի մարզում անցկացվել են ֆուտբոլի,բասկետբոլի, վոլեյբոլի, շախմատի առաջնություններ, հուշամրցաշարեր, դպրոցականների սպոտլանդիաներ, սպարտակիադաներ, ռազմամարզական խաղեր:

Փետրվարին Եղեգնաձորում և Վայքում կազմակերպել է <<ՀՀ Վարչապետի գավաթ>> սեղանի թենիսի սիրողական մրցաշարի մարզային փուլը:

Մարտի 22-ին ավարտվել է 2023 թվականին անցկացվող <<ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի հանրապետության դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա>> միջոցառման Վայոց ձորի մարզի ֆուտզալի առաջնության մարզային փուլը: Արենիի միջնակարգ դպրոցի թիմը հաղթող ճանաչվեց և՛ մարզային, և՛ միջմարզային (Սյունիք, Վայոց ձոր, Արարատ) փուլերում՝ հնարավորություն ստանալով մասնակցելու հանրապետական փուլին:

Մարտի 27-ին Եղեգնաձոր քաղաքում կազմակերպվել է ՀՀ հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարարանների աշակերտների՝ սպարտակիադայի ծրագրով հրաձգության մրցույթի մարզային փուլը, որին մասնակցել են շուրջ 30 դպրոցականներ:

Մարտի 28-ին սպարտակիադայի ծրագրով անցկացվել է բազկամարտի մրցույթ, որին մասնակցել են 32 մասնակիցներ մարզի տարբեր դպրոցներից:

Մարտի 30-ին և 31-ին Եղեգնաձոր և Վայք քաղաքներում կազմակերպվել են 1-3-րդ և 4-6-րդ դասարանների միջև անցկացվող Վայոց ձորի մարզի դպրոցականների <<Սպորտլանդիա>> ծրագրի տարածաշրջանային փուլերը: Մարզային փուլին մասնակցել են հաղթող թիմերը՝ Եղեգնաձորի թիվ 1, թիվ 2 հիմնական և Զառիթափի, Ազատեկի միջնակարգ դպրոցները:

Հանրապետական փուլին մասնակցել են Եղեգնաձորի թիվ 1 և Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցների թիմերը:

Ապրիլի 27-ին Նորավանքի կիրճում անցկացվել է նաև <<ՀՀ Վարչապետի գավաթ>> դպրոցականների թիմային խճուղավազք:

Մարզային փուլում հաղթող ճանաչվեց Արենիի միջնակարգ դպրոցի թիմը, որն էլ իրավունք ստացավ մասնակցելու 2023 թվականի մայիսի 19-ից 20-ը Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Պարզ լճի 5 կիլոմետրանոց համապատասխան տարածքում անցկացվող «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքին: Հանրապետական փուլում թիմը գրավեց 2-րդ պատվավոր տեղը:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության,
մշակույթի և սպորտի վարչություն